ո՛չ ճանաչելով զմիմեանս, բաղումք մե-
ռան. և ըմբռնեալ զՍմիրատ եղ յար-
գելանս, և գտեալ զ՚ԵԹՈՒՄ առողջա-
գոյց զմի ակն. կալաւ զԵշխանութիւնն
և իշխեաց ամ մի: Եւ դրդեալ զօրքն
՚այոց զ՚ԵԹՈՒՄ, աքսորեցին զՊոս-
տանդին, և ինքն կալաւ զիշխանութիւ-
նըն: Որոյ իշխանութիւնն յետ և յա-
ռաջ Ի. ամ:

Լէոն՝ որդի Թորոսի՝ իշխեաց ամս
Գ: Թաթար Մերզէն Պիլարդուն ա-
ռաւն, նենգիւ ըմբռնեալ սպան զնա: Եւ
եղբայրն ՚ԵԹՈՒՄ՝ գնաց առ Թաթար
խանն 'ի գանկատ: Եւ մարդ ուղարկեալ
պատժեաց շուտով զՊիլարդուն, և սպան
զնա:

Օշին Ծիրանածին՝ որդի Լէոնի դրա-
սիրի՝ փոքր եղբայրն ՚ԵԹՈՒՄ, իշխեաց
ամս ԺԴ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան